## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Արշակ Գալստյանը, Լավրենտի Գևորգյանը, Արամ Սարգսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հարությունյանը, բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտաշես Ղարիբյանը, Բաղդասար Թովմասյանը, Զորիկ Տիգրանյանը, Զոհրակ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

***ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*//Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի N 2 նիստի օրակարգը.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

2) Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին:

7) Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 22-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին:

10) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6/

2.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը ԱՁ Տիգրան Մեսրոպի Հովհաննիսյանին մալուխներ անցկացնելու նպատակով Եղվարդ քաղաքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուներից 104-ը, Եղվարդ համայնքի Զովունի գյուղում գտնվող հենասյուներից 46-ը, 3 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

2.Յուրաքանչյուր հենասյան համար վարձավճար սահմանել ամսական 200 դրամի չափով, գույքի վարձակալության ընդհանուր ամսական վճարը՝ 30000 դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում ԱՁ Տիգրան Մեսրոպի Հովհաննիսյանի հետ կնքել գույքի վարձակալության մասին պայմանագիր:

Կողմ-7 Դեմ-2 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7/

3.Լսեցին

***ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Եղվարդ համայնքի ավագանու 2019 թվաքանակի դեկտեմբերի 10-ի <<Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 90 որոշումը:

2.Հաստատել Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի ևհավելված N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի փետրվարի 1-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8/

4.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 788627 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 35-րդ փողոց, 1/4-1 հասցեում գտնվող, 07-029-0078-0022 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.01107 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 110,7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9/

5.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 4139928 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 14-րդ փողոց, թիվ 53/2 հասցեում գտնվող, 07-029-0003-0002 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0598 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 162.7 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 22.5 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 0.13 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը և 9.2 քմ մակերեսով պարիսպը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

6.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*<u>/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/</u>*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 700128 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 40-րդ փողոց, 42-8/4-1 հասցեում գտնվող, 07-029-0020-0171 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0112 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 7.15 քմ արտաքին մակերեսով մառանը, 14.5 քմ մակերեսով ծածկոցը, և 15.55 քմ մակերեսով ծածկոցը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

7.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34, 35 կետերով սահմանված պայմաններով, ուղղակի վաճառքի միջոցով 1707826 դրամ ընդհանուր գնով օտարել Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 2-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող, 07-029-0016-0021 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.02324 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 26,54 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 39,34 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 60,36 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը կառուցապատումն իրականացրած անձին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

8.Լսեցին

***ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ</u>/*

Համաձայն Հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-5-րդ ենթակետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Եղվարդ համայնքի ղեկավարին Խաչատուր Մամբրեյի Սիմոնյանի կողմից ներկայացված դիմումը՝ որոշում եմ.

Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 22-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 52 որոշման 1-ին կետը շարադրել նոր, հետևյալ խմբագրությամբ.

<<1.Զովունի գյուղի վարչական տարածքում գտնվող, համատեղ սեփականության իրավունքով Խաչատուր Մամբրեյի Սիմոնյանին պատկանող 07-029-0215-0020 կադաստրային ծածկագրի 0,291 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից, համայքային սեփականություն հանդիսացող 07-029-0215-0015 կադաստրային ծածկագրի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15022017-07-0028) 0,082 հա գյուղատնտեսական այլ

հողատեսքը ուղղակի վաճառքով օտարել Խաչատուր, Լյուդմիլա, Վերգուշ, Լիլիթ, Լուսինե Սիմոնյաններին, Քրիստինե Թադևոսյանին 5535 դրամով>>:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

9.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-029-0011-0064 ծածկագրի տակ գտնվող, 0,115 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը օտարելու վերաբերյալ և սահմանել նրա մեկնարկային գինը՝ 5300000 դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

10Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-029-0185-0037 ծածկագրի տակ գտնվող, 0,49094 հա գյուղատնտեսական այլ հողատեսքը օտարելու վերաբերյալ և սահմանել նրա մեկնարկային գինը՝ 650000 դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

11.Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-031-0106-0015 ծածկագրի տակ գտնվող, 0,2137 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը օտարելու վերաբերյալ և սահմանել նրա մեկնարկային գինը՝ 948830 դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՍՐԱՊ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Համմիկ Զաքարյանը ______________________________

Հավելված N 1
Եղվարդ համայնքի ավագանու
2020 թվականի հունվարի 29-ի N 8 որոշման արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ընդհանուր բաժին
2. Ֆինանսական բաժին.
3. Ներքին աուդիտի բաժին.
4. Բնապահպանության, գյուղատնտեսության և հողօգտագործման վերահսկողության բաժին.
5. Կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժին.

### ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Եղվարդի տարածքային բաժին

Հավելված 2
Եղվարդ համայնքի ավագանու
2020 թվականի հունվարի 29-ի N 8 որոշման արձանագրության

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 79

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Դրույք | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | | 8 | 9 | 10 |
| 1 | Եղվարդի համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 310000 | 1 | | | 310000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Քաղաքական | | 1 | 250000 | 1 | | | 250000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 1 | 200000 | 1 | | | 200000 |
| 4 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | | 1 | 200000 | 1 | | | 200000 |
| 5 | | Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական | Հայեցողական | | 1 | 190000 | 1 | | | 190000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Զովունու վարչական ղեկավար | Հայեցողական | | 1 | 230000 | 1 | | | 230000 |
| 7 | Բուժականի վարչական ղեկավար | Հայեցողական | | 1 | 210000 | 1 | | | 210000 |
| 8 | Արագյուղի վարչական ղեկավար | Հայեցողական | | 1 | 210000 | 1 | | | 210000 |
| 9 | Զորավանի վարչական ղեկավար | Հայեցողական | | 1 | 210000 | 1 | | | 210000 |
| 10 | Սարալանջի վարչական ղեկավար | Հայեցողական | | 1 | 180000 | 1 | | | 180000 |
| 11 | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.1-1 | 1 | 220000 | 1 | | | 220000 |
| 12 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ- | Համայնքային ծառայության | 2.3-6 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 13 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ- | Համայնքային ծառայության | 2.3-7 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 14 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-8 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 15 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-9 | 1 | 130000 | 1 | | | 130000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-10 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 17 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-11 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 18 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-12 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 19 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-13 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 20 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-14 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 21 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-13 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 22 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-14 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 23 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-15 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 24 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-16 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 25 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-17 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 26 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-7 | 1 | 110000 | 1 | | | 110000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդհանուր բաժին** | | | | | | | | |
| 27 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-1 | 1 | 190000 | 1 | | | 190000 |
| 28 | Բաժնի պետի տեղակալ | Համայնքային ծառայության | 2.2-1 | 1 | 150000 | 1 | | | 150000 |
| 29 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 30 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 31 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-3 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 32 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-4 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 33 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 110000 | 1 | | | 110000 |
| 34 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-2 | 1 | 110000 | 1 | | | 110000 |
| | **Քաղաքացիական կացության ակտերի Եղվարդի տարածքային բաժին** | | | | | | | | |
| 35 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 1.3-1 | 1 | 256000 | 1 | | | 256000 |
| 36 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-6 | 1 | 133000 | 1 | | | 133000 |
| | **Ներքին աուդիտի բաժին** | | | | | | | | |
| 37 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-5 | 1 | 190000 | 1 | | | 190000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-5 | 1 | 110000 | 1 | | | 110000 |
| | **Ֆինանսական բաժին** | | | | | | | | |
| 39 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-2 | 1 | 190000 | 1 | | | 190000 |
| 40 | Բաժնի պետի տեղակալ | Համայնքային ծառայության | 2.2-2 | 1 | 150000 | 1 | | | 150000 |
| 41 | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 42 | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 43 | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-3 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 44 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-5 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 45 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-6 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 46 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-7 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 47 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-8 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| | **Կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժին** | | | | | | | | |
| 48 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-4 | 1 | 190000 | 1 | | | 190000 |
| 49 | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-5 | 1 | 130000 | 1 | | | 130000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-11 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 51 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-12 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 52 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-4 | 1 | 110000 | 1 | | | 110000 |
| | **Բնապահպանության, գյուղատնտեսության և հողօգտագործման վերահսկողության բաժին** | | | | | | | | |
| 53 | Բաժնի պետ | Համայնքային ծառայության | 2.1-3 | 1 | 190000 | 1 | | | 190000 |
| 54 | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-4 | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 55 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-9 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 56 | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-10 | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 57 | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-3 | 1 | 110000 | 1 | | | 110000 |
| | **Տեխնիկական սպասարկման անձնակազմ** | | | | | | | | |
| 58 | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 130000 | 1 | | | 130000 |
| 59 | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 2 | 120000 | 2 | | | 240000 |
| 60 | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 5 | 110000 | 2,5 | | | 275000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 61 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 62 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | | 8 | 110000 | 7,5 | | | 825000 |
| 63 | | Անասնաբույժ | Տեխնիկական սպասարկման | | 5 | 110000 | 5 | | | 550000 |
| 64 | | Ջինապարտների գծով պատասխանատու | Տեխնիկական սպասարկման | | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| 65 | | Տնտեսվար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 120000 | 1 | | | 120000 |
| | | Ընդամենը | | | 79 | | 76 | | | 10709000 |